ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ավագյան,

ի պատասխան Ձեր 11.12.2023թ. հ.054 գրության՝ տեղեկացվում է, որ Երևանի քաղաքապետարանի և «Բերրի Վորլդ» ՍՊԸ-ի միջև 08.11.23թ. կնքված ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/325 ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանների համաձայն պետք է մատակարարվի 100 հատ Կելրեյթերիա հուրանավոր և 200 հատ Հուդայածառ ծառատեսակները, ընդհանուր 22490,0 հազ. դրամի չափով, որը դեռևս չի մատակարարվել, ըստ ունեցած տվյալների՝ կմատակարարվի առաջիկա օրերին, գարնանը ծառերի լրացման և փոխարինման համար: Երևան քաղաքում տնկվող ծառատեսակների ընտրությունը, չափերը, նկարագրերը և տեղադրման վայրերը կատարվում են Երևան քաղաքում անցկացված գիտական աշխատաժողովի արդյունքում ընդունված և «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրենին կից ստեղծված գիտատեխնիկական խորհրդի որոշումների համաձայն, որոնց հնարավոր է ծանոթանալ Կազմակերպության պաշտոնական կայքում:

Միաժամանակ տեղեկացվում է, որ վերը նշված ձեռքբերումների համար մրցույթը հայտարարվել էր դեռևս անցած տարվա աշնանից, որը մի քանի անգամ չի կայացել և պարբերաբար վերահայտարարվել է՝ հաշվի առնելով ծառատեսակների բացառիկ չափսերը և քաղաքի համար բնորոշ նկարագիրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ